

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՄ ԹՈՓՉՅԱՆ

ՄՏՔԻ ԵՎ ԱԶՔԻ ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐԻ «ԼԻՐ ԱՐՔԱ» ՈՒՄ. ԷԳԻՊՈՒՍ, ԼԻՐ ՈՒ ԳԼՈՍԹԵՐ¹

Կուրուժյունը, բառիս ուղիղ և փոխաբերական իմաստներով, Լիր արքայի ողբերգական պատմության գլխավոր շարժառիթներից ու հասկացություններից մեկն է: «Ինչպես որ առաջին տեսարանում Լիրի արարքների փոխաբերական խենթությունն այնուհետև վերածվում է փաստացի խենթության, և դրա շնորհիվ նա ձեռք է բերում իմաստություն, այնպես էլ Գլոսթերի կուրուժյունն իր որդիների կերպարների ճշմարիտ էության հանդեպ վերածվում է իսկական կուրուժյան, որը նրան թույլ է տալիս զգալով տեսնել, թե ինչ է այս աշխարհը»² (հմմտ. IV.6.146. «Տեսնում եմ զգալով»): Առաջին տեսարանում Լիրը կույր է մտոք, և դա ավելի շուտ ոչ թե օբյեկտիվ, այլ սուբյեկտիվ ինքնակամ ու ծայրահեղորեն համառ կուրուժյուն է: Նա ոչ թե կատարելապես գուրկ է իրեն շրջապատող մարդկանց վարմունքի իրական դրդապատճառներն ընկալելու կարողությունից, այլ պարզապես չի ուզում տեսնել ակնհայտը՝ իր ան-

¹ Սա հատված է հետևյալ գրքից. **Ուիլիամ Շեքսպիր**, *Լիր արքա*, անգլերենից թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Արամ Թոփչյանի**, Եր., «Զանգակ», 2015:

² **Kiernan Ryan**, 'Introduction' in *King Lear*, edited with a commentary by George Hunter, introduced by Kiernan Ryan, Penguin Shakespeare, 2005 (first published 1972), Kindle Edition, loc. 608–610. այս և մյուս անգլերեն հատվածների թարգմանությունը մերն է:

խոսափելի հետևանքներով³: Մա արքայական կամակորուլթյուն է, միապետի մեքենայական վարմունք. նա սովոր է, որ իր բոլոր ասածներն ու արածները տեղին են և անառարկելի: Ուստի զուր է Քենթը փորձում նրա հայացքը ճիշտ կողմ դարձնել («Լավ նայիր, Կիր, թո՛ղ դեռ մնամ, / Որ աչքերդ հենց ինձ հառես» [I.1.159–160]), քանզի մտքի կուրուլթյունն այս պահին անկասելի է: Ակամա հիշում ենք Եղիշե պատմիչին. «Լա է կոյր աչօք, քան կոյր մտօք», և այս թևավոր խոսքը՝ իմաստային այլ տարբերակով ու ձևակերպմամբ, հնչելու է նաև Գլոսթերի բերանից.

Տեսնում էի, բայց վայր ընկա. հաճախ, երբ մենք
Հնար ունենմ, ձախողում ենմ, իսկ արատը
Դառնում է մեր աչակիցը:

(IV.1.20-22)

Ուշագրավ է, որ «կոյր մտօք» նախկինում հիմարուլթյուն գործած, բայց այնուհետև ֆիզիկական կուրուլթյան շնորհիվ ուղեղով ավելի լավ «տեսնող» կոմսն ունի իր հռչակավոր նախատիպը հին հունական դրամայում: Թեքեի արքա էդիպուսը, որն իր կյանքի ճակատագրական պահերին՝ հորը սպանելիս ու մոր հետ ամուսնանալիս, տուժել է անգիտուլթյունից և չի տեսել, երբ աչքերը տեղն էին, կուրանալուց հետո հանկարծ դառնում է տեսնող ու իր մտքի «աչօք» գուշակում ապագան (այդպիսին է նա Սոփոկլեսի «էդիպուսը Կոլոնոսում» ողբերգուլթյան մեջ):

Առավել ևս հետաքրքիր է էդիպուսի ու Կիրի նմանուլթյունը: Երկուսն էլ զրկվում են թագավորական գահից և դառնում դժբախտ աստանդական, առաջինը՝ անգիտաբար գործած մեղքերի, երկրորդը՝ իր փառամոլ ու քմահաճ բնավորուլթյան և մտքի կուրուլթյան հետևանքով: էդիպուսին հայրենի քաղաքից վտարում են (կամ նրա աքսորին չեն ընդդիմանում) իշխանատենչ որդիները, իսկ Կիրին իրենց տներից դուրս են անում բիրտ ու երախտամոռ դուստրերը: Այսինքն՝ Շեքսպիրի այս ցնցող ողբերգուլթյան հավերժական թեմաների ու մոտիվների ակունքները կարելի է գտնել արդեն անտիկ աշխարհում:

Դա մեզ հուշում է դիմել Հին Հունաստանի հետ նաև մեկ այլ զուգահեռի: Մ.թ.ա. V դարի հույն փիլիսոփա Պրոտագորասն ասում էր. πάντων χρημάτων μέτρον ἔστιν ἄνθρωπος («Ամեն ինչի չափը մարդն է»)⁴, և եթե նման մոտեցումը նրա օրոք դեռևս շատ կենսունակ չէր ու հաճախ հարուցում էր աստվածավախ ժամանակակիցների առարկուլթյունը, ապա Վերածննդի ժամանակաշրջանում այն լայն տարածում էր ստացել⁵: Այստեղից էլ՝ հին հունական թա-

³ Հմմտ. *The Tragedy of King Lear*, ed. **Jay L. Halio** (The New Cambridge Shakespeare), Cambridge: Cambridge University Press, 2007 (first published 1992), p. 14:

⁴ Տե՛ս, օրինակ, Պլատոնի «Թետետոս» տրամախոսության մեջ (152a):

⁵ Հմմտ. *The Tragedy of King Lear*, ed. **Jay L. Halio**, p. 14:

տերգություն և Շեքսպիրի երկերի միջև մի էական տարբերություն. եթե վերջինիս հերոսների գործողությունները սովորաբար թելադրված են իրենց իսկ՝ «մարդ-չափանիշների» կամքով (բացառություններից է, թերևս, Ուրվականի միջամտությունը Համլետի կյանքին), ապա Էդիպուսի աղետալի վարժունքը և նրա ընտանիքի բնաջնջումը նախասահմանված են ի վերուստ: Այս տոհմի շառավիղների վրա ներգործում է մարդկային միկրոկոսմոսից դուրս գտնվող մի աշխարհակարգ՝ անդիմադրելի ուժով ուղղորդելով նրանց այնտեղ, ուր չպետք է լինեին, և ստիպելով անել այն, ինչ չպետք է անեին: Եվ հենց նույն ուժն է, որ, Էդիպուսի հանդեպ չգիտես ինչու գործած դաժանություններից հետո, ի վերջո որոշում է նրան դարձնել պաշտամունքային հերոս ու նրա գերեզմանն օժտել գերբնական զորությամբ (ըստ «Էդիպուսը Կոլոնոսում» ողբերգության): Հույներն այն կոչում էին տարբեր անուններով ԽՆՊ, ԽՈՐԱ («ճակատագիր», «վիճակ», «օրհաս») կամ ΔՆՎՂԿԴ («անհրաժեշտը»): Այն առկա էր բոլոր մարդկանց կյանքում, բայց առանձին գործերում (օրինակ՝ Սոփոկլեսի «Անտիգոնե»-ում կամ Եվրիպիդեսի «Մեդեա»-ում) դարձել է երկրորդական ու համարյա աննկատ՝ ասպարեզը թողնելով հակամարտող կողմերի ազատ կամքին և այդ երկերը մոտեցնելով ապագային՝ շեքսպիրյան ողբերգությանը:

Կուրուլթյան մոտիվը, այսպիսով, ծնվելով անտիկ աշխարհում և կերպավորվելով, հատկապես, մեծ ողբերգակ Սոփոկլեսի երկերում, հասել է Շեքսպիրին և ձեռք բերել այլ իմաստավորում: Էդիպուսի մտավոր կուրուլթյունը, երբ նա սպանում է հորը և ամուսնանում մոր հետ, ոչ թե կամավոր է, այլ ճակատագրով նախասահմանված: Իր ակամա հանցանքների բացահայտումից հետո նա իրեն կուրացնում է կամովին, խելահեղ մոլուցքի ժամանակ, բայց հետո, դարձյալ գերբնական ներգործությամբ, դառնում է իմաստուն գուշակ: Կիրի մտավոր կուրուլթյունը, ընդհակառակը, ինքնակամ է և հասցնում է նրա բանականության իսպառ կորստյան: Խելագարության բովոլ անցնելով, սակայն, ծերունազարդ արքան կյանքի վերջում, ինչպես արտաքին հանգամանքների, այնպես էլ իր հոգում ու մտածելակերպում տեղի ունեցած փոփոխությունների ճանապարհով, ձեռք է բերում այն իմաստությունը, որը, ի տարբերություն իր խելքի շնորհիվ թեբեացիներին Մֆինքսից փրկած Էդիպուսի, երբեք չէր ունեցել ու չէր փնտրել: Գլոսթերը նույնպես ցուցաբերում է մտքի կուրուլթյուն՝ մասամբ ինքնակամորեն, մասամբ էլ արտաքին ազդեցության հետևանքով (քանզի նա խաղալիք է դառնում Էդմունդի ձեռքին), և արդյունքում իսկապես զրկվում է աչքերից: Կուրանալով Գլոսթերը սկսում է հստակորեն տեսնել մտովի, այսինքն, ինչպես Էդիպուսի պարագայում, անագորույն մարմնական ցավի ու խեղման շնորհիվ ի հայտ է գալիս մտքի նոր ունակություն, բայց այն տարբերությամբ, որ Էդիպուսի կուրանալն իր իսկ ձեռքի գործն է, իսկ Գլոսթերինը՝ ուրիշի:

Ասեւ է թե՛ երեք դեպքում էլ արգասիքն իմաստությունն է (էդիպուսի պատմության մեջ՝ մարգարեական գերիմաստությունը)՝ իբրև խիստ ցավազին, տառապալից ձեռքբերում, իսկ կուրությունից դեպի իմաստություն նման շարաքաստիկ ճանապարհը ոչ այլ ինչ է, քան ողբերգություն:

Արամ Թոփչյան

Слепота разума и глаз в *Короле Лире* Вильяма Шекспира: Эдип, Лир и Глостер

“Лучше быть слепым глазами, чем слепым разумом” – это известное изречение Египше, которое встречается также в других источниках, идеально подходит к драматичной истории короля Лира и графа Глостера, знемнитым аналогом которых в античной литературе является Эдип. В статье рассматриваются интересные параллели между этими тремя трагическими персонажами.

Aram Topchyan

The Blindness of Mind and Eyes in William Shakespeare’s *King Lear*: Oedipus, Lear and Gloucester

“It is better to be blind in the eye than blind in the mind”: this famous saying of Yeghishe, found in other old sources as well, perfectly fits the dramatic story of King Lear and the Earl of Gloucester who in their turn have a well-known counterpart in Classical Greek literature, namely Oedipus. The article discusses the interesting parallel between these three tragic characters.